# ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ № 2
# № ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-7/3-5 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ք. Երևան 30 .03.2020թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի պետ Ն. Յոլչյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև Գնորդ, մի կողմից և Ա/Ձ Արգար Ավետիսյանը այսուհետև՝ Վաճառող, մյուս կողմից, հիմք ընդունելով 06.03.2019թ. կնքված № ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-7/3-5 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 8.15 կետը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն Համաձայնագիրը (այսուհետև՝ Համաձայնագիր) հետևյալի մասին:

## 1. Համաձայնագրի առարկան

1.1 Սույն Համաձայնագրով Վաճառողը պարտավորվում է Պայմանագրով սահմանված կարգով և ծևով, Համաձայնագրի № 1 Հավելվածով նախատեսված ժամկետներում և ծավալներով Գնորդին կամ նրա կողմից որոշված Ստացողին որպես սեփականություն հանձնել Պայմանագրի № 1 Հավելվածով նախատեսված տեսակի և որակի ապրանք (այսուհետև՝ Ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար:

## 2. Համաձայնագրի գինը և վճարման կարգը

2.1 Սույն Համաձայնագրով Վաճառողի մատակարարած Ապրանքի յուրաքանչյուր միավորի գինը ներկայացված է սույն Համաձայնագրի № 1 հավելվածում: Համաձայնագրի ընդհանուր գինը կազմում է 8442257,69(ութ միլիոն չորս հարյուր քառասունեըկու հազար երկու հարյուր հիսունյոթ ամբողջ վաթսունինը) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Ապրանքի գինը ներառում է հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները, Ապրանքի գրանցման հետ կապված, ինչպես նաև Վաճառողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

2.2 Գնորդն իրեն հանձնած Ապրանքի դիմաց վճարումը կատարում է Պայմանագրի 3.3 կետին համապատասխան, բայց ոչ ուշ քան 10.12.2020թ.:

## 3. Այլ պայմաններ

3.1. Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

3.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ գնման Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքները և պարտականությունները, Ապրանքի մատակարարման, հանձնման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

3.3. Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3.4. Սույն Համաձայնագիրը կազմված է 2 թերթից, հայերենով, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն Համաձայնագրի № 1 և № 2 Հավելվածները բաղկացած են 1 թերթից և հանդիսանում են Համաձայնագրի անբաժանելի մասը:

3.5 Սույն Համաձայնագրով նախատեսված՝ Պատվիրատուի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտը, իսկ պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ԶՈՒ թիկունքի վարչությունը:

## 4. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունը:

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| ՀՀ պաշտպանության նախարարություն | ԱՁ Արգար Ավետիսյան |
| ՀՀ, ք. Երևան, Բագրևանդի 5 | ՀՀ,ք. Վայոց Ձորի մարզ, գ. Արփի, 1փ. 3 |
| ՀՀ ՖՆ գործառնական վարչություն | Հայբիզնեսբանկ ՓԲԸ |
| Հ/Հ 900011144079 | Հ/Հ 1150021136416450 |
| ՀՎՀՀ 02522157 | ՀՎՀՀ 85772452 |
| ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի պետ | |
| Ն. ՅՈԼՉՅԱՆ | Ա.ԱՎԵՏԻՍՅԱՆ |

Հավելված N 1
№ ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-7/3-5 N 2 համաձայնագրի

## ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

| Հ/հ | Անվանումը | Չ/մ | Գինը (դրամով) | Ընդհանուր գումար | Անհրաժեշտ քանակը, 2020թ ըստ ամիսների | | | | | | | Քանակը |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | |
| 1 | մուրաբա (Մուրաբա հոնի) | կգ | 620.87 | 2358685.13 | | | | | | 2000 | 1799 | 3799 |
| 2 | մարինացված վարունգ (Մարինացված վարունգ 1լ-ոց) | կգ | 387.39 | 6083572,56 | 3000 | 3000 | 3000 | 3000 | 3704 | | | 15704 |

Հավելված N 2
№ ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-7/3-5 N 2 համաձայնագրի

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

| Հ/հ | Գնման առարկան | CPV-ի կոդը | Նախատեսվում է ֆինանսավորել 2020թ. ըստ ամիսների, բայց ոչ ուշ քան 10.12.2020թ* | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր |
| 1 | մուրաբա (Մուրաբա հոնի) | 15332230/9 | | | | | | 1241740 | 2358685.13 | 2358685.13 | 2358685.13 |
| 2 | մարինացված վարունգ (Մարինացված վարունգ 1լ-ոց) | 15331490/1 | 1162170 | 2324340 | 3486510 | 4648680 | 6083572.56 | 6083572.56 | 6083572.56 | 6083572.56 | 6083572.56 |

** Վճարման ենթակա գումարը ներկայացված է աճողական կարգով:*

**ԳՆՈՐԴ**

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի պետ

Ն. ՅՈՒԶՅԱՆ

**ՎԱՃԱՌՈՂ**

ԱՁ Արգար Ավետիսյան

ԱՎԵՏԻՍՅԱՆ